ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, շաբաթ.—Կաղանդ, Տարեմուտ:
Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Անանիա եպս. Արաբաջյանը և պատարագի վերջում Իջման ս. սեղանից հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

* * *

Հունվարի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 5-ին, չորեքշաբթի.—Ճրագալույց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի ատիթով, ս. պատարագ մատուցեց Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը և «Հայր մեր»ից առաջ օրվա տոնի առթիվ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 6-ին, հինգշաբթի.—Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ծննդյան հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 7-ին, ուրբաթ.—Բ. օր Ծննդեան: Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հոգեհանգստյան ս.

պատարագ մատուցեց Մայր Աթոռի մկրտարանի ծիսակատար Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

* * *

Հունվարի 9-ին, կիրակի.—Դ օր Ծննդեան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հունվարի 13-ին, չորեքշաբթի.—Ը օր Ծննդեան: Տօն Անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, օրվա մեծ տոնի առիթով ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 15-ին, շաբաթ.—Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին:

Այսօր Մայր Աթոռի Մկրտարանում ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

* * *

Հունվարի 22-ին, շաբաթ.—Սրբոց Հայրապետացն Աթանասի և Կիւրղի:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հունվարի 23-ին, կիրակի: Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 29-ին, շաբաթ.—Սրբոցն Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին և չորեքտասան զինուորացն:

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Հունվարի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս աբդ. Զիրեկյանցը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՄԱՅՐ ՏԱՃԱՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ